ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/5

ք. Երևան «26» «Փետրվար» 2026թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանին, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ջի Սոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վահագն Նալբանդյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով՝ Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը պարտավորվում է Կատարողին պատկանող www.job.am կարիերայի օնլյան հարթակի, այսուհետ նաև՝ «Հարթակ», համապատասխան բաժնում հնարավորություն տալ Պատվիրատուին ինքնուրույն տեղադրելու թափուր աշխատատեղի վերաբերյալ հայտարարություն (հայտարարություններ), այսուհետ՝ «Հայտարարություն», իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այն որպես ինտերնետային ծառայություն, այսուհետ՝ «Ծառայություն» և վճարել դրա համար՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

1.2.Կատարողը Ծառայությունը մատուցում է ըստ Պատվիրատուի կողմից նախընտրած Կատարողին պատկանող ծառայությունների փաթեթի՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի:

1.3. Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվելու են մեկ տարի ժամկետով:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով՝ Պայմանագրում նշված ժամկետներում:

2.1.2. Ապահովել www.job.am կարիերայի օնլյան հարթակի միջոցով Հայտարարության տեղադրումը և տեսանելիությունը Հարթակի այցելուներին և անդամներին:

2.1.3. Պատվիրատուին տրամադրել բոլոր հնարավորությունները Հարթակ մուտք գործելու և Հայտարարության տեքստն ինքնուրույն կազմելու/լրացնելու, փոփոխելու և հեռացնելու համար:

2.1.4. Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուին տրամադրել խորհրդատվություն՝ Հայտարարությունը կազմելու/լրացնելու, փոփոխելու և հեռացնելու ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Պահանջել Պատվիրատուից վճարել Ծառայությունների դիմաց՝ Պայմանագրի «3» կետով սահմանված կարգով:

2.2.3. Ծառայության համար Պայմանագրի «3» կետով սահմանված կարգով վճարումը չստանալու դեպքում հեռացնել Հարթակից Պատվիրատուի Հայտարարությունը:

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Հայտարարության տեքստը ձևավորել գրագետ, առանց հերյուրանքներ պարունակող բառերի և թափուր աշխատատեղի վերաբերյալ հայտարարության հետ չկապված այլ տեղեկությունների:

2.3.2. Վճարել Ծառայության համար Պայմանագրի «3» կետով սահմանված կարգով:

2.3.3. Պահպանել Հարթակիի Օգտատերերի տվյալների գաղտնիությունը, այն է՝ որևէ կերպով չհրապարակել և երրորդ անձանց չփոխանցել ցանկացած տվյալ, որը Պատվիրատուին հայտնի է դարձել սույն պայմանագրի շրջանակներում Հարթակն օգտագործելու, Հարթակիի գործիքներից օգտվելու ընթացքում:

Սույն Պայմանագրի իմաստով «Օգտատեր» է համարվում Կատարողին պատկանող www.job.am բազայում գրանցված յուրաքանչյուր իրավաբանական և ֆիզիկական անձ:

Սույն Պայմանագրի իմաստով «Երրորդ անձ» է համարվում Պայմանագրի կողմ չհանդիսացող ցանկացած ֆիզիկական և/կամ իրավաբանական անձը:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ստեղծել Հարթակում համապատասխան էջ:

2.4.2. Հարթակում տեղադրել Պայմանագրով սահմանված քանակությամբ հայտարարություններ՝ մեկ տարվա ընթացքում:
2.4.3. Օգտվել մարդկային ռեսուրսների բոլոր գործիքներից՝ մեկ տարի ժամկետով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրի համաձայն Կատարողի կողմից մատուցվող Ծառայության գումարը կազմում է 196000 (հարյուր ինսունվեց հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ գումարը, որը վճարվում է Կատարողի կողմից հարկային հաշվի դուրս գրմանը հաջորդող 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
3.2. Սույն Պայմանագրի համաձայն բոլոր վճարումները կողմերի միջև կատարվում են անկանխիկ եղանակով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

4.1. Կատարողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման դեպքում Պատվիրատուի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծումը չի ենթադրում Կատարողի կողմից Պայմանագրի գնի ամբողջական կամ մասնակի վերադարձ Պատվիրատուին կամ Պատվիրատուի կողմից նշված այլ անձի:
4.2. Սույն Պայմանագրի և դրա առնչությամբ ծագող բոլոր հարաբերությունները և պարտավորությունները ենթակա են կարգավորման և մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
4.3. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ծագած վեճի լուծման նպատակով ՀՀ օրենսդրության համաձայն դիմել իրավազոր ՀՀ դատարաններ:

5. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

5.1. Սույն Պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե նման չկատարումը կամ անպատշաճ կատարումը եղել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
5.2 Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական կամ քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Ծառայության դադարեցումը, ահաբեկչական գործողությունները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Նման իրավիճակում հայտնված Կողմը մյուս Կողմին հնարավորինս շուտ պետք է տեղեկացնի անհաղթահարելի ուժի առկայության մասին:

5.3 Պայմանագրով պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է այն ժամկետով, որի ընթացքում գործել է անհաղթահարելի ուժի հանգամանքներ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.4 Կողմը, որի համար անհաղթահարելի ուժի հետևանքով ստեղծվել է պարտավորությունների կատարման անհնարինություն, պարտավոր է առավելագույն կարճ ժամկետում մյուս կողմին գրավոր տեղեկացնել նման հանգամանքների առաջացման կամ դադարման մասին, բայց նման հանգամանքների առաջացումից (դադարումից) ոչ ուշ, քան 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում:

6. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

6.1. Սույն Պայմանագրի առնչությամբ ծանուցումները և այլ հաղորդագրությունը Կողմերը պետք է ուղարկեն միմյանց պատվիրված նամակով, էլեկտրոնային հասցեով կամ առձեռն:
6.2. Ծանուցումները համարվում են պատշաճ կարգով ուղարկված, եթե դրանք ուղարկվում են համապատասխան Կողմին՝ Կողմերի ներքոշարադրյալ հասցեներով, այդ թվում՝ էլ. հասցեներով: Հասցեի փոփոխության վերաբերյալ չծանուցելու դեպքում, ծանուցում չտրամադրած Կողմի նախկին հասցեով ուղարկված հաղորդագրությունը համարվում է պատշաճ ծանուցում:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագիրը հանդիսանում է դրա առարկայի շուրջ Կողմերի ամբողջական համաձայնություն և գերակայում է Կողմերի միջև նախորդ բոլոր պայմանավորվածությունների նկատմամբ:

Հավելված N 1
«26» «02» 2026 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-26/5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայության			
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	72411110/1	Հայտարարությունների տեղադրման ծառայություններ	«PRO» ծառայությունների փաթեթը ներառում է. • **12 հայտարարության** տեղադրում՝ job.am ինտերնետային կայքում՝ մեկ տարվա ընթացքում, ընդ որում մեկ հայտարարությունը հնարավորություն է տալիս տեղադրելու մեկ թափուր հաստիք, և յուրաքանչյուր տեղադրված հայտարարությունն ակտիվ է առավելագույնը 30 օր Պատվիրատուի կողմից նախընտրած հետևյալ էլեկտրոնային հարթակներում. ա/ թափուր աշխատատեղ/երի վերաբերյալ հայտարարությունների տեղադրում www.job.am ինտերնետային Կայքում: բ/ Թափուր աշխատատեղ/երի վերաբերյալ հայտարարությունների տեղադրում **Facebook, Instagram, Twitter, Telegram** սոց. հարթակներում, և **Linkedin** սոց. հարթակում՝ կախված աշխատանքի տեսակից: գ/ www.job.am կայքի **Դիմումների կառավարման համակարգի** օգտագործման հնարավորություն, ինչպես նաև ամբողջական վիճակագրական տվյալների հասանելիություն: դ/ **Թեկնածուների որոնման համակարգի (Candidate Search System)** օգտագործման հնարավորություն՝ 6 ամիս: ե) www.job.am-ում՝ **Պատվիրատուի կազմակերպության էջի** ստեղծման հնարավորություն, որտեղ Պատվիրատուն կարող է տեղադրել հավելյալ տեղեկատվություն իր կազմակերպության մասին, ինչպես նաև լոգոտիպ, ետնանկար և հղումներ: զ/ **5 Boost միավոր**, որը հնարավորություն է տալիս ակտիվ աշխատատեղը տեղափոխել առաջին էջ: է/ **5 Top միավոր**, որը հնարավորություն է տալիս ակտիվ աշխատատեղը տեղադրել Թոփ բաժնում (7 օր ժամկետով): ը/ **Կազմակերպության լոգոտիպի տեղադրում** կայքի գլխավոր էջում (եթե ներառված է փաթեթում): Սույն փաթեթի շրջանակներում ծառայությունները մատուցվում են Պայմանագիրը կնքելու պահից 1 (մեկ) տարի ժամկետով՝ բացառությամբ հատուկ նշված դեպքերի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ Ծառայության
գլխավոր քարտուղար
Տ. Իգիթյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻ ՍՈՖԹ» ՍՊԸ
ք. Երևան, Հակոբ Հակոբյան
Հեռախոս +374 96 144 038
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570013685860100
ՀՎՀՀ՝ 00111592

«ՋԻ ՍՈՖԹ» ՍՊԸ
տնօրեն՝
Վ. Նալբանդյան

/ստորագրություն/
Կ.Տ.

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

7.3.Պայմանագրի բոլոր փոփոխությունները և/կամ լրացումները Կողմերի միջև ձևակերպվում են գրավոր և ստորագրվում Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից՝ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից, հայերեն լեզվով, մեկական օրինակ տրվում է յուրաքանչյուր կողմին:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ՋԻ ՍՈՖԹ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Երևան, Հակոբ Հակոբյան
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հեռախոս +374 96 144 038
Հ/Հ 900011175016	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 02204739	Հ/Հ՝ 1570013685860100
ՔԿ Ծառայություն	ՀՎՀՀ՝ 00111592
գլխավոր քարտուղար	«ՋԻ ՍՈՖԹ» ՍՊԸ
Տ. Իգիթյան	տնօրեն՝
	Վ. Նալբանդյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ